

Այս անգամ կը ներկայացնենք երկու քերթուած: Առաջինը Մ. Աճէմեանէն որ աշակերտակից եղած է անմահն թէրզեանի՝ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, ի վեներտիկ, 1856-60, Հ. Ալիշանի շունչին տակ մեծնալով: Աճէմեան, երեսուն տարիներ վերջ, կարգալով ծանօթ յուշատետրին մէջ Նահապետին տողերը ուղղուած թէրզեանի (տե՛ս «Բազմավէպ» Փետր-Մարտ, 1934, էջ 109) կը յուզուի և իր սիրուն ու սահուն քնարով երախտագիտութեան և սիրոյ անմահական տողեր կը դրոշմէ հոն Ալիշանի յիշատակին, վերջիշեւով միանգամայն երջանիկ բայց անդարձ իր մանկութիւնը:

Թիւ 3 (էջ 9 Ալբումի)

ԱՌ ՄԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆ ԻՄ
ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

Քո յուշատետրին մէջ այն երբեակ տող քորս զծած է մեծ Հայրեն քերթող ես համբուրեցի շրթամբ ջերմեռանդ եւ կազդուրեցաւ հոգիս իմ հիւանդ, Ո՛վ կրնայ լսել նորա քաղցրիկ լար եւ սիրտ փղծկելով չի յուզուիր չի լար... Նորա՛ որ կրթեց մանկական սիրտ մեր Պարտիմբ դու և ես սուրբ և հեշտ ժամեր, ժամեր որ անշուշտ թռան մինչ յերկին, Իցի՛ւ թէ մանուկ ըլլայինք կրկին.

2/14 Սեպտեմբեր 1887

Մ. ԱՃԵՄԵԱՆ

Երկրորդն ալ պատկառելի դէմքի մը՝ Կ. Գարագաշինն է, այդ մեծ տեսաբանին ու տնտեսագէտին որ հիմնադիրներէն է Օսմ. Դրամատան: Մուրատեան վարժարանի նախկին սանին և մեծ զարգացումով օժտուած մարդուն այս տողերը՝ ուղղուած առ տիկին թէրզեան կը զգացնեն իսկոյն

գրագէտի ճաշակն ու շնորհը հոգւոյ մը սիրահար Պէշիքթաշլեանի հոգւոյն և քընարին՝ որուն շունչէն բան մ'ունին անկասկած այս տողերն ալ տխրանոյշ, որոնք նուիրուած են անմահութեան համար թէրզեանի երգերուն՝ և անոր ընտանեկան երջանիկ բոյնին դրուատիքով:

Թիւ 4 (էջ 3 Ալբումի)

ԱՌ ՇՆՈՐՀԱԼԻՅ ՏԻԿԻՆ ԹԵՐԶԵԱՆ,

Յուշատետրիդ մէջ կը խնդրեմ Որ բան մը ես եւքս զըրեմ. Ի՞նչ ակն ունիս մըռայլ մըռքէս, Ի՞նչ ակն ունիս սըրտէս նըսեմ...

Երբ կը տեսնեմ ըզբեզ Տիկին, Մանկիկներովդ երջանկացեալ եւ ամուսնովդ որ կաթոգին Պայծառանայ յաջացդ ի փայլ,

Երբ մանկիկներդ ուրախ թռչնիկք Բերնէդ առ իս կը ճըռռուղեն Երբ ամուսնոյդ երգք գեղեցիկք Շըրթունքներէդ ինձ կը հընչեն,

Յիշեմ զաւուրսն իմ առաջին... Մանկիկներովդ ես մանկանամ... Երանութեամբդ քո սիրային Բարեբաստիկ անդրէն կ'ըլլամ...

Ո՛հ ցորչափ կեամ, ինձ երեցիւր, Մանկիկներովդ և ամուսնով Յուշատետրիդ մէջ զայս խընդիր Գըրեմ, Տիկին, ես կարօտով...

Եւ երբ, եղուկ, տանդ առջեւէն Օր մը տանին զիս անկենդան, Արցունք մը տուր պատուհանէն ինձ՝ որ այսօր լամ յայս մատեան...

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ

Բերա 2/14 Օգոստոս 1888

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԵԻՅ ՄԻՆՁԵԻ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ 1934, էջ 157)

ԹԱՏՐՈՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1859 թ. ՅՈՒՆԻԱՐ-ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ
«ՄԵՐՆ ՆԵՐՍԷՍ» — Հեղ. Սարգիս Վանանչեցի Միրզայեան:

Վերածնութեան նոյն շրջանում, 50-ական թւականների վերջերին, Թիֆլիսի հայ թատրոնն ստանում է ուրոյն ձեւ և կերպարանք:

Ո՛վքեր են հանդիսանում այս պատմաշրջանում Թիֆլիսի հայ թատրոնի դրօշակակիրները, ո՞ր կենտրոնում է սկսում թատրոնական շարժումը և առհասարակ ի՞նչ պիէսներ են բեմադրում:

50-ական թւականներին Թիֆլիսի հայ թատրոնի նախաձեռնողները հանդիսանում են մի խումբ ուսանող երիտասարդներ: Հրապարակ են գալիս Ներսիսեան դպրոցի սաները—Միհրդատ Ամերիկեան, Արտաշէս Սուքիասեան, Պերճ Պոռչեան, Ստեփաննոս Մատինեան — և իրենց ուսուցիչների զԸԼԽաւորութեամբ, նիւթական ամենածանր պայմաններում, սկսում են իրենց գործունէութիւնը: Բեմադրում են զԼիւստրապէս նէութիւնը: Բեմադրում են զԼիւստրապէս պատմական պիէսներ: Ճիշտ է, զրանք ուսանողական պատահական ներկայացումներ են և գեղարեստական տեսակետից առանձին մի արժէք չեն ներկայացնում, բայց այդ բեմադրութիւններն են 50-ական թւա-

կանների թատրոնական առաջին փորձերը, որոնք հետզհետէ ձեւակերպւելով՝ առանց նայատուկ ձեւ ու երանգ են ստանում:

Ո՛ր թիւ է ծագում ուսանողների մէջ Ներսիսեան դպրոցում թատրոն հիմնելու և ներկայացումներ կազմակերպելու միտքը: Պատմական փաստաթղթերը, ինչպէս տեսանք, հաստատում են — Ալամդարեանի շրջանից: 1832 թւին Աբէլ Գուրգիմբէզեանի և ժամանակի ինտելիգէնցիայի մէջ նորից է ծագում թատրոնի զաղափարը: Աւելի ուժեղ կերպով դրսեւորւում է 1853 թւին: Դպրոցի թատրոնասէր ուսանողները — Պոռչեան, Ամերիկեան, և Սուքիասեան — որոշում են «Թատրոն հիմնել»: Բայց դա պատահական երեւոյթ չէր: Այդ թւականներին օտար թատերասէրները Թիֆլիսի քաղաքային թատրոնում կազմակերպում են ուսերէն, վրացերէն և ֆրանսերէն լեզուներով մի շարք ներկայացումներ: Ահա այդ բեմադրութիւնները հայ ուսանողների մէջ արժարժում են թատրոնի սէրը, հրահրում հայերէն լեզուով ներկայացումներ տալու միտքը: Նոյնիսկ պատահում են դէպքեր, որ հայկական թատրոն չլինելու պատճառով՝ դերասանական ձիրք ունեցող հայ երիտասարդները — Լօրիս Մելիքով, Անտոնեան—մտնում են վրաց դերասանական խումբը և ծառայում վրա-

1. Տե՛ս Պերճ Պոռչեանի թատրոնական յուշերը, Ա. Կ.